# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
# «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
## ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 346 — Ք. Երևան, Զորափի 40

«21» 04 2015 թ. — Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53


«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք (ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՇԲՕ-15/3-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, փ. Զորափի 40 հասցեով, մինչև **2015թ. մայիսի 6-ը, ժամը 11:00-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Սարգսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի շենքում, ք.Երևան, փ. Զորափի 40 հասցեով, **2015թ. մայիսի 6-ին, ժամը 11:00-ին**:

Գնման առարկա է հանդիսանում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ **«կոստակիչ մարտկոցների»** ձեռքբերումը:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ **«կուտակիչ մարտկոցների»** մատակարարման (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) **№3 Հավելվածում**:

Մասնակիցները հայտով ներկայացնում են[1] իրենց կողմից հաստատված՝

**ա.** գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (**Հավելված № 1**), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն և հարկ վճարողի հաշվառման համարը,

**բ.** գնային առաջարկ (**Հավելված № 2**): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

**գ.** հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ (**Հավելված № 2.1**):

**դ.** հայտարարություն՝ եթե առաջարկվում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք (**Հավելված № 2.2**):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ընտրված (առաջին տեղ զբաղեցրած) մասնակիցը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտարարություն առաջարկվող ապրանքի անվանման և տեխնիկական բնութագրի վերաբերյալ, ինչպես նաև, եթե առաջարկվում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք՝ ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատը: Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընդ որում, ընտրված (առաջին տեղ զբաղեցրած) մասնակիցը պարտավոր է ծանուցումը (պայմանագիր կնքելու առաջարկը) ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում և ստորագրելու գնման պայմանագիրը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **emergency103@gmail.com**:

Հարգանքով՝
«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Թագուհի Ստեփանյան

---

1 Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ/ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ/ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ/ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածներով նախատեսված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ/ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 51-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին՝ ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ/ տվյալները: